ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1955 Общественные науки

Հ. Կարապետյան

1920 Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի բանվորների, աշխատավոր գյուղացիների և զինվորների 1920 թվականի մայիսյան զինված ապստամբությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարի դարավոր պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում և հանդիսանում է այդ պատմության փառավոր էջերից մեկը։

Մայիսյան ապստամբությունը Բաքվի փառապանծ Կոմունայից հետո, Սովետական իշխանության հաղթանակի համար 1918—1920 թթ. Անդրկովկասի աշխատավորների մղած պայքարի խոշոր դրվագներից է։ Այդ հերոսական ապստամբությունը, որը գլխավորում էին Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, աշխատավորների համաժողովրդական զինված պայքար էր, որի նպատակն էր վերջ տալ դաշնակների մարիոնետային, հակաժողովրդական անիծյալ տիրապետությանը, երկրից վռնդել անգլո-ամերիկյան լկտի գաղութարարներին և Հայաստանում հաստատել սովետական կարգեր։

Մայիսյան ապստամբությունը հանդիսացավ այն պայքարի շարունակությունը, որ Հայաստանի բանվորները, գյուղացիները և զինվորները, Անդրկովկասի բոլոր աշխատավորների հետ միասին, բոլշևիկների ղեկավարությամբ, մղում էին՝ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը Անդրկովկասում ապահովելու համար։

I

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան ժողովուրդների պատմության մեջ նոր էպոխայի սկիզբ հանդիսացավ, նրանով սկսվեց «...համաշխարհային պատմության նոր գլուխը՝ պրոլետարական դիկտատուրայի դարաշրջանը»[1]։

Ռուսաստանի բոլոր ժողովուրդների, առանձնապես բազմաչարչար հայ ժողովրդի ազատագրումը կեղեքումից ու ստրկությունից՝ սերտ կերպով կապվեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ճակատագրի հետ։

Հայաստանի աշխատավորները Հոկտեմբերյան ռևոլյուցիայի լուրն ընդունեցին մեծ խանդավառությամբ և ջերմորեն ողջունեցին նրա հաղթանակը։ Նրանց համար պարզ դարձավ, որ «Դիվանագիտական կոմբինացիաների հին ուղին Հայաստանի ազատագրության ուղին չէ», որ ինչպես բոլոր ճնշված ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի ազատագրության իսկական ուղին

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 116։

բոլշևիկների ցույց տված ուղին է, այն ուղին, որը «...անցնում է Ռուսաստանում հոկտեմբերին սկսված բանվորական ռևոլյուցիայի միջով»[1]։

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները ՌԿՊ Երկրային Կոմիտեի ղեկավարությամբ, ինչպես մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիան, այնպես էլ նրանից անմիջապես հետո, քաղաքական, մասսայական մեծ աշխատանք կատարեցին։ Նրանք կազմակերպեցին մասսաներին՝ ընդդեմ սոցիալիստական ռևոլյուցիայի թշնամիների՝ շահագործողների կամակատար դաշնակների, մենշևիկների, էսեռների և մյուսների, որոնք ամեն կերպ ձգտում էին ժողովրդական մասսաներին հեռու պահել պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող ռևոլյուցիոն պայքարից։

Հայաստանի քաղաքներում և գյուղական վայրերում՝ Ալեքսանդրոպոլում, Սարիղամիշում, Կարսում, Երևանում, Ջալալ-օղլիում (Ստեփանավան), Հաղպատում և այլ վայրերում, բանվորները, գյուղացիները և զինվորները՝ ողջունելով Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակը, իրենց համերաշխությունն էին հայտնում Պետրոգրադի պրոլետարիատին ու զինվորներին, հայտարարելով, որ Հայաստանում ևս իշխանությունը պետք է անցնի Սովետներին և պայքարում էին այդ նպատակի համար։

Սարսափած Անդրկովկասում Սովետական իշխանության հաստատման փաստից, ռևակցիոն ուժերը, ցարական գեներալների և օտարերկրյա իմպերիալիստների ներկայացուցիչների ակտիվ աջակցությամբ, ստեղծեցին հակասովետական կոալիցիա, միասնական ճակատ կազմեցին, որպեսզի ճնշեն աշխատավորների ռևոլյուցիոն շարժումը, կանխեն սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակը Անդրկովկասում։ Այդ հակասովետական բլոկը՝ բաղկացած մենշևիկներից, դաշնակներից և մուսավաթիստներից, աշխատավորների կամքին հակառակ, 1917 թ. նոյեմբերի 15 (28)-ին կազմեց կոնտրռևոլյուցիոն «կառավարություն», այսպես կոչված, Անդրկովկասյան Կոմիսարիատը որոշեց չճանաչել Սովետների համառուսական երկրորդ համագումարի կողմից ընտրված օրինական կառավարությունը երկրում՝ ԺԿՍ-ի իշխանությունը։

Կոնտրռևոլյուցիոն «կառավարությունը» սկսեց վարել Անդրկովկաս Սովետական Ռուսաստանից անջատելու քաղաքականություն, որը խիստ դիմադրության էր հանդիպում ամբողջ երկրամասի աշխատավորության կողմից։ Ինչպես Անդրկովկասի մյուս վայրերում, այնպես էլ Հայաստանում՝ Ալեքսանդրոպոլում, Կարսում, Սարիղամիշում և այլ վայրերում տեղի էին ունենում միտինգներ և ժողովներ՝ ընդդեմ կոալիցիոն Կոմիսարիատի։ Աշխատավորները պահանջում էին ցրել ինքնակոչ Կոմիսարիատը, իշխանությունը հանձնել Սովետներին, ճանաչել ԺԿՍ-ի իշխանությունը Լենինի ղեկավարությամբ։

Սովետական իշխանության համար մղվող պայքարը 1918 թ. մարտի վերջերից թևակոխում է իր նոր փուլը, երբ քաղաքացիական կռվի մարտերում՝ Բաքվում իշխանությունը ամբողջովին անցնում է Սովետի ձեռքը։ Բաքվի Սովետական իշխանության գոյությունը ողնշնշում էր երկրամասի աշխատավորներին։ Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն կոալիցիան, իշխանությունը իր ձեռքում պահելու նպատակով՝ դիմում է օտարերկրյա ինտերվենտների օգնու-

[1] Վ. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 30—31։

թյան։ Նա Անդրկովկասը նախ հանձնում է գերմանա-թյուրքական զավթիչների հոշոտմանը, ապա անգլո-ամերիկյան գաղութարարների կեղեքմանը։ Երկիրը դարձնում է ռազմա-ստրատեգիական բազա Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելու համար։

Անդրկովկասի աշխատավորության այդ նողկալի թշնամիները՝ կատարելով ունևոր դասակարգերի և ինտերվենտների ցանկությունները՝ 1918 թ. ապրիլի 22-ին Անդրկովկասը հայտարարում են անջատված Սովետական Ռուսաստանից։ Կոնտրռևոլյուցիոներների այդ քայլը մեծագույն զայրույթ առաջ բերեց ժողովրդական լայն խավերի մեջ, որոնք պահանջում էին հաշիվ անցկացնել։ Անդրկովկասի, այդ թվում Հայաստանի բանվորներն ու գյուղացիները դիտակցում էին, որ իրենց փրկությունը միայն Ռուսաստանի հետ լինելու մեջ է, որ ներքին և արտաքին կեղեքումից նրանց կարող է փրկել միայն Սովետական իշխանությունը։

Անդրկովկասի աշխատավորների ռևոլյուցիոն միասնությունը ջլատելու, Սովետական իշխանություն Բաքվում և նրա մերձակա շրջաններում խեղդելու նպատակով՝ հակասովետական կոալիցիան մասնատեց Անդրկովկասը։ 1918 թ. մայիսի 26-ին Սեյմը դիմեց ինքնալիկվիդացման։ Նույն օրը Վրաստանը հայտարարվեց «անկախ» ռեսպուբլիկա։ Վրաց մենշևիկներին հետևեցին մուսավաթիստները և դաշնակները, ստեղծելով մարիոնետային առանձին ազգային ռեսպուբլիկաներ։

II

Հայ ժողովրդի արգահատելի թշնամիները՝ դաշնակները, Հայաստանի աշխատավորների կամքից անկախ, 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանը հայտարարեցին «անկախ» և հաստատեցին իմպերիալիստներից ամբողջովին կախված իրենց արյունոտ տիրապետությունը։

Դաշնակների տիրապետության տարիներին Հայաստանում թագավորում էր անգլո-ամերիկյան գաղութարարների կամքը։ Հայաստանի «կառավարողները» խաղալիք էին իրենց տերերի ձեռքին, հանդիսանում էին նրանց թելադրանքների կատարողները։

Դաշնակները ոչ մի ջանք չէին խնայում, որպեսզի պարտության մատնեն Բաքվի Սովետական իշխանությունը, որը հանդիսանում էր ամբողջ Անդրկովկասի աշխատավորների ռևոլյուցիոն պայքարի ուղեցույցը, միջնաբերդը։ Նրանք որոշեցին թյուրքական ինտերվենտների տրամադրության տակ դնել Հայաստանի տերիտորիան և երկաթուղին՝ Բաքվի Սովետական իշխանության դեմ զորք և ռազմամթերք տեղափոխելու համար։

Բաքվի հայոց ազգային խորհուրդը՝ դաշնակների գլխավորությամբ, քայքայիչ աշխատանք էր կատարում թիկունքում, գերմանա-թյուրքական ինտերվենտների և մուսավաթական բանդաների դեմ մղվող վճռական պայքարի ժամանակ։ Նա գաղտնի կապեր էր հաստատում անգլիական իմպերիալիստների հետ, իր ներկայացուցիչների միջոցով բանակցություններ էր վարում Պարսկաստանում (Էնզելի) գտնվող անգլիական զորքերի հրամանատար գեներալ Դիլնսթերվիլի հետ՝ Բաքուն անգլիացիներին հանձնելու համար և դրանով էլ նպաստեցին անգլիացիների մուտքին՝ Բաքու։

Անգլիական իմպերիալիստները եկան Բաքու նավթին տիրելու, Սո-

վետական իշխանությունը տապալելու համար։ Նրանք Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ վարում էին բնաջնջման, ստրկացման քաղաքականություն։ Չնայած դրան՝ դաշնակները, Հայաստանի աշխատավորների այդ դահիճները, երկիրը հանձնեցին անգլո-ամերիկյան ինտերվենտներին, այն ծառայեցնելով ռազմա-ստրատեգիական բազա՝ ընդդեմ Սովետական Ռուսաստանի։ Անգլո-ամերիկյան իմպերիալիստներին չէր հետաքրքրում հայ ժողովրդի ծանր դրությունը, նրանք ցանկանում էին հայ աշխատավորներին օգտագործել որպես «սքանչելի ռազմական նյութ», ինչպես գրում է գեներալ Դինստիրվիլը։

Դաշնակցական կառավարությունը սերտ համագործակցության մեջ էր գտնվում Դենիկինի և մյուս սպիտակ գվարդիական գեներալների հետ, օգնում էր նրանց՝ Սովետական իշխանության դեմ կռվելու համար։ 1919 թ. Ա. Ի. Միկոյանը գրել է, որ դաշնակցական կառավարությունը վայելում է Անտանտայի իմպերիալիստների և Դենիկինի համակրանքը, աջակցությունը և բոլոր միջոցներով պաշտպանում է նրանց, «իսկ Դենիկինի հետ ռազմական գաղտնի դաշինքի մեջ է»[1]։

Դենիկինը Հայաստանը համարում էր իրեն ենթակա տերիտորիայի մի մասը, իսկ դաշնակների բանակը՝ իր բանակի միավորներից մեկը։

Դաշնակցական կառավարությունը իր գոյության տարիներին միշտ վարում էր ակտիվ և սանձարձակ հակասովետական քաղաքականություն։

Հայաստանը դաշնակների տիրապետության օրոք ազգամիջյան ջարդերի ու կռիվների թատերաբեմ էր։ Դաշնակա-մաուզերիստական հրոսակախմբերը թալանում, սպանում էին ազգային փոքրամասնություններին։ Նրանք ավերակ դարձրին բազմաթիվ ադրբեջանական գյուղեր և բնակավայրեր՝ Նոր Բայազետի, Բասարգեչարի, Զանգիբասարի, Աղբաբայի և մյուս շրջաններում։ Նույն մեթոդով էին գործում հայերի դեմ մուսավաթիստները՝ Ադրբեջանում, մենշևիկները՝ Վրաստանում։

Ժողովրդական տնտեսության բայքայումը Հայաստանում հսկայական չափեր էր ընդունել։ Կատարյալ փլուզման էր հասել առանց այն էլ թույլ զարգացած և համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին քայքայված արդյունաբերությունը։ 1919 թվականին արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թվականի համեմատությամբ պակասել էր ավելի քան 12 անգամ։ Սուր ճգնաժամ էր ապրում երկրի տնտեսության հիմնական բնագավառը՝ գյուղատնտեսությունը իր բոլոր ճյուղերով։ 1913 թվականի համեմատությամբ հացահատիկային կուլտուրաների տարածությունը 1919 թվականին պակասել էր չորս անգամ, իսկ ամբողջ գյուղատնտեսության համախառն արտադրանքը՝ մոտ վեց անգամ։

Դաշնակների կառավարությունը չէր ցանկանում լուծել հողային հարցը։ Ավելին, նրա քաղաքականությունը գյուղում՝ նպաստում էր գյուղի մանր տընտեսությունների հողազրկման պրոցեսի արագացմանը, չքավոր տնտեսությունների քայքայմանը և ունևոր-կուլակային վերնախավի ուժեղացմանը։ Չքավոր և միջակ տնտեսատեր գյուղացիների հողը, գործիքները, անասունը և այլն կենտրոնանում էր կուլակային և վաշխառուական տարրերի ձեռքում։

Աշխատավոր գյուղացիների բոլոր փորձերը՝ կալվածատերերից և կուլակ-

[1] *С. М. Киров*, Статьи, речи, документы, стр. 143.

ներից հողը խլելու ուղղությամբ, հանդիպում էին դաշնակցական կառավարության ակտիվ դիմադրությանը, զենքի ուժով հողը վերադարձվում էր խոշոր հողատերերին։ Չնայած դրան՝ հողազուրկ և սակավահող գյուղացիները շարունակում էին պայքարը կալվածատիրական հողերը խլելու համար։ Ահա թե ինչ է գրում 1920 թ. ապրիլի 24-ին, էջմիածնի համայնական վարչությունը պառլամենտի նախագահին. «Տարիներով հողազուրկ գյուղացիները պահանջում են հող և հողի հավասարեցում... Եվ արդեն իրենք սկսել են այդ գործը, որ առաջ է բերել ամեն մի գյուղում երկու հոսանք, մեկը՝ որից հող պետք է կտրվի, իսկ մյուսը, որին հող պետք է տրվի։ Ամեն օր Վաղարշապատ են թափվում հարյուրավոր գյուղացիներ, որոնք ասում են. «Հողային հարցը մենք դրժվարանում ենք որոշել, եկեք տեղն ու տեղը տեսեք, քննեք ու որոշեք, թե չէ մենք ստիպված պետք է լինենք մեր եղանակով, հեղափոխական ճանապարհով լուծել այդ հարցը։ Դրությունը լուրջ է, և եթե մենք միջոցներ ձեռք չառնենք, իրենք առանց մեզ կլուծեն այդ և նման շատ հարցեր»[1]։

Անտանելի ծանր դրություն էր ստեղծվել քաղաքներում։ Արդյունաբերության քայքայման և ձեռնարկությունների լիկվիդացման հետևանքով՝ անգործությունը մեծ չափերի էր հասել։ Իսկ աշխատողների խղճուկ աշխատավարձը, թղթադրամի արժեքի կատաստրոֆիկ անկումը, առաջին անհրաժեշտ սպառման առարկաների բացակայությունը, չտեսնված թանկությունը և այլն, կատարյալ աղքատության էին մատնել բանվորներին և քաղաքի մյուս աշխատավորներին։

1918—1920 թթ. Հայաստանը աղքատության, վայրենի կամայականության երկիր էր, որբերի ու արցունքի երկիր։ Սովն ու համաճարակը մեծ ավերներ էին գործում։ Ժողովրդի լայն մասսաները ապրում էին կատարյալ տեռորի, ահաբեկման և իրավազրկության պայմաններում։ Տնտեսական փլուզման հետ զուգընթաց կանգ էր առել կուլտուրայի զարգացումը, քայքայվում էր լուսավորության գործը, փակվում էին դպրոցները, ավելանում էր անդրագիտությունը։ Ժողովրդին սպառնում էր ֆիզիկական բնաջնջման վտանգը։ Երկիրը գտնվում էր կործանման եզրին։

Միանգամայն ակներև է, որ աշխատավորների համար ստեղծված այս ծանր դրությունը ավելի ու ավելի պետք է սրեր և սրում էր դասակարգային պայքարը ամբողջ երկրում։ Տիրող ռեժիմը, տեռորը և անարխիան ոչ միայն չէին թուլացնում աշխատավորների պայքարը հանուն ժողովրդի և երկրի փրկության, այլև գնալով խորացնում և ուժեղացնում էին այն։ 1918—1920 թթ., մինչև մայիսյան ապստամբությունը, Երևանում, Ալեքսանդրոպոլում, Սարիղամիշում, Նոր Բայազետում, Լոռու և Զանգեզուրի գավառներում, Շամշադինի և այլ շրջաններում տեղի են ունենում բանվորների, գյուղացիների և զինվորների բազմաթիվ հակադաշնակցական մասսայական ցույցեր, ելույթներ և գործադուլներ։

Աշխատավորների իրավացի պահանջները շատ հաճախ արժանանում էին դաշնակ-մաուղերիստների տեռորին։ Դաշնակները փորձում էին Հայաստանի բանվորների, զինվորների և աշխատավոր գյուղացիների հետզհետե խորացող ռևոլյուցիոնացումը կանխել տեռորի, սպանությունների, բանտի և ահաբեկման միջոցով, որոնց աշխատավորները պատասխանում են առավել ակ-

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 67/199, գ. 157, էջ 24։

տիվ պայքարով։ Այսպես, 1920 թվականի հունվարի սկզբներին Ալեքսանդրապոլի դեպոյի երկու բանվորների ձերբակալությանը բանվորները պատասխանում են գործադուլով, պահանջելով ազատ արձակել ձերբակալվածներին։ Նոր ձերբակալությունները առաջ են բերում քաղաքի ամբողջ աշխատավորների ցասումը, որից հետո ոստիկանությունը ստիպված բավարարում է բանվորների պահանջները. ձերբակալվածները ազատվում են։

1920 թ. փետրվար-մարտ ամիսներին տեղի են ունենում Սարիղամիշի զինվորների հակակառավարական ելույթները, Գորիսի կազրային բատալիոնի և հեծյալ հարյուրակի հուզումները և մի շարք այլ գյուղացիական ելույթներ։ Աշխատավորների ելույթները կազմակերպում ու գլխավորում էին Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, որոնք 1919—1920 թթ. ավելի են ուժեղացնում մասսայական, քաղաքական և կազմակերպական աշխատանքները աշխատավորական լայն մասսաների մեջ։ Այդ տարիներին ավելի են ամրանդվում կոմունիստական կազմակերպությունները։ Կազմակերպում են բազմաթիվ նոր բջիջներ։

Հայաստանի աշխատավորների, զինվորների և երիտասարդության մեջ քաղաքական-մասսայական մեծ աշխատանք էր կատարում Հայաստանի կոմունիստական երիտասարդական կազմակերպությունը՝ «Սպարտակ»-ը։ «Սպարտակ»-ը Հայաստանի Կոմպարտիայի մարտունակ, ակտիվ և գործունյա օգնականն էր, որի աշխատանքները գլխավորում էին Ղ. Ղուկասյանը, Ա. Խանջյանը, Ա. Բուդաղյանը, Պ. Պետրոսյանը՝ Նոր Բայազետ, Գ. Ջրաղայպանյանը՝ Ալեքսանդրապոլ և ուրիշներ։

1919—1920 թթ. ՌԿ(բ)Պ Երկրային Կոմիտեն Հայաստան է ուղարկում զգալի թվով ղեկավար աշխատողներ։

1919 թ. սեպտեմբերին կազմվում է Հայաստանի Կոմպարտիայի ղեկավար կենտրոնը՝ ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեն (Արմենկոմը)։ Տեղերում պարտիական ղեկավար աշխատանք էին կատարում շատ փորձված և աչքի ընկնող բոլշևիկներ։ Դրանց թվում էին՝ Երևանում Ա. Մռավյանը, Սա. Ալլահվերդյանը, Ս. Մարտիկյանը, Ղ. Ղուկասյանը, Հ. Զարդարյանը, Ա. Խանջյանը և ուրիշներ։ Ալեքսանդրապոլում պարտիական աշխատանքը գլխավորում էին Բ. Ղարիբջանյանը, Ե. Սևյանը, Ս. Գրիգորյանը, Նոր Բայազետում՝ Հ. Սարուխանյանը, Բ. Բատիկյանը, Դիլիջանի դավառում՝ Շ. Ամիրխանյանը, Ե. Մկրտումյանը, Ա. Բերբերյանը, Ե. Շեմախյանը, Զանգեզուրում՝ Հ. Բեջանյանը (Կամարի), Բ. Հարությունյանը, Խ. Մկրտչյանը, Կարսում՝ Ա. Նազարյանը, Ա. Թովմասյանը, Վ. Ղազանջյանը, Սարիղամիշում՝ Ս. Ճուղուրյանը, Կ. Գարագաշը, Պ. Կոոխմալյակինը և շատ ուրիշներ, որոնց թիվը Հայաստանում հետզհետե ավելանում էր։

Կոմունիստական կազմակերպությունների կազմակերպական, քանակական և իդեական ամրացումը, աշխատավորների մեջ նրանց աշխատանքի ուժեղացումը և նրանց հեղինակության աննախընթաց բարձրացումը խիստ անհանգստացնում է դաշնակներին ու նրանց տերերին։ Օտարերկրյա դաղութարարները չէին կարող հանդուրժել, որ իրենց գործակալները՝ դաշնակները անուժ են՝ կասեցնելու կոմունիստական ազդեցության ուժեղացումը աշխատավորների մեջ։ Ուստի նրանք թելադրում են դաշնակցական կառավարությանը՝ դիմել կտրուկ միջոցների, անխնա դատաստան տեսնել կոմունիստների և ռևոլյուցիոն բանվորների ու գյուղացիների հետ։

1919 թ. մարտի 23-ին, Անդրկովկասի բրիտանական հրամանատարությունը, դաշնակների կառավարությանը ուղղված դրությամբ՝ հիշեցնելով Ալեքսանդրոպոլում գոյություն ունեցող բոլշևիկյան Կոմիտեի և նրա աշխատանքի մասին, անհրաժեշտ էր համարում՝ «անմիջական քայլերի դիմել», վերայնել Ալեքսանդրոպոլի Կոմիտեն և նրա ղեկավարներին խիստ պատժել։

Ձերբակալությունները, հալածանքն ու տեռորը, սակայն, չէին կարող արգելակել աշխատավորների համախմբմանը կոմունիստական կազմակերպությունների շուրջը, նրանց դրոշի տակ։ Աշխատավորները համոզվել էին, որ հայ բուրժուազիան, նրա կամակատար պարտիաները և անգլո-ամերիկյան գաղութարարները երկիրը տանում են դեպի լիակատար կործանում։ Փակուղուց, որի մեջ գտնվում էր Հայաստանը, կարող էր դուրս գալ միայն դաշնակների տիրապետության տապալման, ինտերվենտներին երկրից վռնդելու և հայ ժողովրդի բախտը Սովետական Ռուսաստանի հետ կապելու, երկրում սովետական կարգեր հաստատելու միջոցով։

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին կոնֆերանսը (հունվար, 1920 թ.) Հայաստանի բոլշևիկների առաջ դրեց անհետաձգելի խնդիր՝ ապստամբության միջոցով տապալել դաշնակների հակաժողովրդական տիրապետությունը և Հայաստանում հաստատել Սովետական իշխանություն։

Խոսելով այդ մասին մի հոդվածում Ա. Մյասնիկյանը մեջ է բերում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին կոնֆերանսի բանաձևից մի հատված, որտեղ ասված՝ է. «Միայն այդ ճանապարհով մենք կկարողանանք Սովետական իշխանության ամուր հիմք դնել, միայն այդ ճանապարհով հնարավոր է փրկել մասսաներին կործանումից...»[1]։

1920 թ. հունվար-ապրիլ ամիսները հանդիսանում են քաղաքական աշխատանքի ծավալման, բանվորներին, զինվորներին ու աշխատավոր գյուղացիներին մոբիլիզացնելու, պարտիական կազմակերպությունները մարտական դրության մեջ դնելու ամիսներ։

Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում, 1919 թ. վերջերին և 1920 թ. սկզբներին Կարմիր Բանակի տարած պատմական հաղթանակները նոր թափ են հաղորդում դաշնակների դեմ մղվող պայքարին։

Թշնամուց ազատագրելով Ուկրաինան և Հյուսիսային Կովկասը, 1920 թվականի գարնանը, Սովետական Զինված Ուժերը ընդհուպ մոտենում են Անդրկովկասին։ Դենիկինի և ինտերվենտների դեմ Կարմիր Բանակի տարած պատմական հաղթանակներով ոգևորված՝ Անդրկովկասի և Հայաստանի աշխատավորները, կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ, ուժեղացնում են իրենց պայքարը «ազգային կառավարությունների» և բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դեմ։ Դաշնակների, մենշևիկների և մուսավաթիստների մարիոնետային կառավարությունների տապալման խնդիրը դառնում է մոտալուտ հարց։

1920 թվականի մարտին ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեն դիմում է Սովետական իշխանությանը և խնդրում՝ օգնել Անդրկովկասի աշխատավորներին՝ ազատագրվելու «ազգային կառավարությունների» և ինտերվենտների ծանր լծից։ «Ձեր հաղթանակը,-- ասված է դիմումի մեջ,— թանկագին եղբայր-

---

[1] ԻՄԷԼՍ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4, գործ 6, թ. 25—26։

ներ և ընկերներ, քաղաքացիական կռվի ճակատներում, ձեր անօրինակ հերոսության սխրագործությունները պատերազմի դաշտերում և աշխատանքի ճակատում, մեր սրտերը լցնում են արիությամբ և համոզմունքով նաև մեր հաղթանակի նկատմամբ...։

Մենք խիստ տենչում ենք ռուս պրոլետարիատի հետ ձեռք-ձեռքի տված՝ մտնել ընդհանուր աշխատանքի և սոցիալիստական շինարարության նոր կյանքի մեջ...»[1]։

Այս դիմումը արտահայտում էր Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի աշխատավորների տենչերն ու ձգտումները, որոնք պայքարում էին իրենց ազատության համար։

Սովետական կարգերի հաստատման առաջին ազդանշանը տալիս է Բաքվի պրոլետարիատը, որը Կարմիր Բանակի զորամասերի օգնությամբ 1920 թվականի ապրիլի 28-ին տապալում է մուսավաթիստների և օտարերկրյա դաշնակների լուծը և երկրում հաստատում Սովետական իշխանություն։

Ադրբեջանում սովետական կարգերի հաստատման և Կարմիր Բանակի Անդրկովկաս մտնելու լուրը արագորեն տարածվում է Հայաստանում և ջերմ խանդավառություն առաջացնում աշխատավորական լայն խավերի մեջ։ Դա ցայտուն կերպով դրսևորվում է մայիսմեկյան ցույցերի ժամանակ և նրանից հետո։

III

Մայիսի 1-ը կազմակերպված նշելու և աշխատավորների ռևոլյուցիոն ուժերը մոբիլիզացնելու համար պարտիական կազմակերպությունները ապրիլի կեսերից նախապատրաստական լայն աշխատանք են ծավալում։ Տոնակատարությունը մասսայական ու կազմակերպված է ընթանում Երևանում, Ալեքսանդրոպոլում, Ղարաքիլիսայում, Սարիղամիշում, Կարսում և մի շարք այլ վայրերում։

Երևանի աշխատավորների ցույցը գլխավորում էր աննկուն բոլշևիկ, Հայաստանի կոմունիստական կազմակերպության մարտական ղեկավար Ստ. Ալլահվերդյանը։ Ցուցարարների կազմակերպվածությունը, նրանց խանդավառ տրամադրությունը, շփոթություն են առաջացնում դաշնակ բախտախնդիրների և նրանց համախոհների լագերում։

Ցույցերը նույն ընթացքն են ունենում նաև մյուս վայրերում և ընդունում լայնարձակ հակադաշնակցական, մարտական բնույթ։

Երևանում, Ղարաքիլիսայում և այլ վայրերում դաշնակների կողմից, պրովոկացիոն նպատակով տարածված հայտարարությունները, ուղղված Կարմիր Բանակի և Սովետական Ադրբեջանի դեմ, խիստ հակահարված են ստանում ցուցարարների կողմից։ Դաշնակների պարտությունը ակնբախ էր։

Ցուցարարները ողջույնի ջերմ հեռագրեր են ուղարկում հաղթանակած Բաքվի պրոլետարիատին, Կարմիր Բանակին և Ադրբեջանի աշխատավոր գյուղացիներին։ Ալեքսանդրոպոլի միտինգի կողմից ընդունած հեռագրում ասվում էր, որ Հայաստանի բանվորները, գյուղացիները և զինվորներն իրենց եղբայրական ձեռքն են մեկնում Բաքվի ռևոլյուցիոն բանվորներին և զինվորներին, և խոստանում են հետևել նրանց օրինակին, տապալել դաշնակների բռնակա-

[1] ԻՄԷԼՄ-ի Վրացական ֆիլիալ, 1917—1920 թթ. բոլշևիկյան պրոկլամացիաների քոնդ։

յական կառավարությունը և հաստատել Սովետական իշխանություն[1]։ Նույնպիսի բովանդակություն ունեցող հեռագրեր են ուղարկվում Հայաստանի մյուս վայրերից։

Ադրբեջանի Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեին ուղարկած հեռագրում Արմենկոմը ամբողջ աշխատավորների և Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների անունից գրում էր. «Միջազգային պրոլետարիատի տոնին՝ մայիսի 1-ին, ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեն, Հայաստանի բոլոր կենտրոններից, չտեսնված, դրանդիոզ միտինգների տեղեկություններ է ստացել։ Հայաստանի պրոլետարիատը, գյուղացիությունը և զինվորները, համախմբվելով Երրորդ Կոմունիստական Ինտերնացիոնալի դրոշի տակ, ողջունում են Ադրբեջանի հերոսական պրոլետարիատին, գյուղացիներին և կարմիր զինվորներին, ռևոլյուցիոն դասակարգային ճակատում տարած նրանց հաղթանակի համար, մուսավաթական դավաճան կառավարությունը տապալելու համար։

Հայաստանի պրոլետարիատը, գյուղացիությունը և ռևոլյուցիոն զինվորները, թևավորված այդ հաղթանակով... հավատում են իրենց հաղթանակի մոտիկությանը ընդդեմ... դաշնակների դավաճան կառավարության»[2]։

Մայիսմեկյան ցույցերը ավելի մարտական մթնոլորտում անցան Ալեքսանդրոպոլում։ Ցույցի մասնակից մի քանի հազար բանվորների, արհեստավորների, ծառայողների և զինվորների միջև դրսևորվում է սերտ բարեկամություն և միասնություն։ Զինվորների պահանջով ցուցարարները այցելում են զորանոցները, որտեղ նույնպես տեղի է ունենում միտինգ։ Միտինգի մասնակիցները «Վարդան Զորավար» զրահագնացքի հրամանատար կապիտան Մուսայելյանի մարտական ճառը ընդունում են խանդավառությամբ։ Մուսայելյանը մերկացնում է դաշնակների մարիոնետային կառավարության հանցագործ, դավաճանական քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ և կոչ է անում համախմբվել Կոմունիստական պարտիայի դրոշի տակ, պայքարել Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար։

Դաշնակները Ալեքսանդրոպոլում, ինչպես նաև Կարսում, Սարիղամիշում և Քավթառլուում (այժմ Փանիկ) նույնիսկ ելույթ ունենալու փորձ չեն անում։

Հիշատակության արժանի է այն փաստը, որ Սարիղամիշում, Ղարաքիլիսայում և մի շարք այլ վայրերում կայազորների զինվորները հակառակ իրենց հրամանատարների կամքին՝ համախմբվել էին կոմունիստների շուրջը։

Մայիսմեկյան ցույցերը հաստատեցին, որ աշխատավորական լայն խավերը ատելությամբ են լցված դաշնակ ավանտյուրիստների նզովյալ տիրապետության դեմ, գիտակցելով, որ անգլո-ամերիկյան իմպերիալիստներին ծառայադրված այդ նողկալի լրտեսները հայ ժողովրդին կանգնեցրել են կործանման եզրին, որից դուրս գալու միակ ելքը սովետական կարգերի հաղթանակի մեջ է։

Մայիսմեկյան ցույցերը միաժամանակ ապացուցեցին, որ Հայաստանի ժողովրդական լայն խավերը գնում են բոլշևիկների ետևից, Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության գաղափարները լայն մասսայականություն են վայելում ժողովրդի մեջ։

Կոնտրռևոլյուցիոն պարտիաների՝ դաշնակների, մենշևիկների, էսեռների

---

1 ՏԿԱ ԻՄԼՍ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, դ. 849, թ. 1,

2 Նույն տեղում։

և այլոց բոլոր ջանքերը՝ մասսաներին շեղել նրանց դասակարգային պայքարից, դուրս բերել կոմունիստների ազդեցությունից՝ ապարդյուն անցան։

Վերջապես, մայիսյան ցույցերի ժամանակ դրսևորվեց աշխատավորների պատրաստակամությունը կոմունիստների ղեկավարությամբ, ղենքը ձեռքին պայքարել դաշնակների տիրապետության տապալման և Հայաստանում Սովետական իշխանության հաստատման համար։

Ակներև էր, որ երկրում գոյություն ունեցող քաղաքական լարված իրադրության պայմաններում արագորեն հասունանում էր ռևոլյուցիոն սիտուացիան։

Ամբողջ երկրում ստեղծվել էր քաղաքական լարված իրադրություն։ Ապրուստամբական տրամադրությունը հատակել էր ոչ միայն կոմունիստներին, այլ բանվորներին, զինվորներին և գյուղացիական լայն մասսաներին։ Դաշնակները անուժ էին այն արգելակելու։ Մայիսյան ցույցերի, աշխատավորների հակադաշնակցական տրամադրությունների մասին գավառներից ստացվող տեղեկությունները, ինչպես խոստովանում էին անդամ դաշնակները, շփոթություն էին առաջացրել Հայաստանի «կառավարողների» շրջանում։ Նրանք զգում էին, որ բռնկող կրակը դժվար է մարել։

Այսպիսով, 1920 թ. մայիսյան ցույցերը Հայաստանում հանդիսացան զինված ապստամբության նախերգանք։ Մայիսի մեկից հետո մասսայական ապստամբություններ բռնկվեցին Ալեքսանդրոպոլում, Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետի գավառում, Սամշադինի, Իջևանի և մյուս շրջաններում։

Դրությունը հատկապես սրվում էր Ալեքսանդրոպոլում։ Դաշնակների մտադրությունը՝ մայիսի լույս 2-ի գիշերը անցկացնել կոմունիստների մասսայական ձերբակալություն, անհաջողության է մատնվում։

Կոմունիստները կենտրոնանում են կայարանում։ Կայարանը և «Վարդան Զորավար» վրահաղնացքը դառնում են ապստամբության կենտրոնը։ Մայիսի 9-ից սկսած դաշնակները այլևս չեն կարողանում երևալ կայարանում։

Բ. Ղարիբջանյանի, Ե. Սևյանի, Ս. Գրիգորյանի և մյուսների գլխավորությամբ կազմակերպվում և դասավորվում էր ապստամբության համար անհրաժեշտ ուժը, ուժեղացվում է մասսայական աշխատանքը զինվորների մեջ։ Մայիսի 7-ին Ալեքսանդրոպոլում կազմվում է Հայաստանի Ռայմ.ռև. կոմիտեն, որի կազմի մեջ մտնում էին Ս. Մուսայելյանը, Ա. Մելքոնյանը, Պ. Պետրոսյանը (զինվոր) և ուրիշներ։

Հաջորդ օրերին ծավալված պայքարը փոխվում է ապստամբության։ Մայիսի 10-ին ապստամբները մտնում են քաղաք կոտրելով դաշնակների դիմադրությունը [1]։

Հայաստանի Ռևկոմի ցուցումով, նույն օրը ապստամբվում են Կարսի բանվորները և կայազորի զինվորները։ Ապստամբություն է տեղի ունենում նաև Քամբեռլուում, իսկ մայիսի 11-ին՝ Սարիղամիշում։ Այսպիսով, մայիսի 10-ին և 11-ին Հայաստանի արևմտյան գլխավոր քաղաքներում և ռայոններում տապալվում է դաշնակների ատելի տիրապետությունը և հաստատվում Սովետական իշխանություն։

---

1 Ալեքսանդրոպոլի ապստամբության մասին տես մեր «Ալեքսանդրոպոլի 1920 թ. մայիսյան զինված ապստամբության պատմությունից» հոդվածը, «Տեղեկագիր», 1948, № 6, իսկ Կարսի ապստամբության մասին՝ «Մի էջ մայիսյան ապստամբության պատմությունից» հոդվածը, «Տեղեկագիր», 1952, № 5։

Հաղթական ապստամբության լուրը շուտով հասնում է Հայաստանի մյուս շրջանների և գավառների աշխատավորներին, որոնք նույնպես ոտքի են ելնում ընդդեմ դաշնակների։

Մայիսյան ապստամբության ակտիվ մասնակից, Ալեքսանդրոպոլի 1-ին հեծյալ գնդի միավորներից մեկի հրամանատար Ի. Խ. Բագրամյանը, խոսելով ապստամբությանը՝ գնդի ունեցած մասնակցության մասին, գրում է. «Գունդը մայիսմեկյան ցույցի օրը վճռապես անցավ երկաթուղային ցուցարար բանվորների կողմը։ Կայազորի այլ մասերին գնդի կողմից ուղղված ռևոլյուցիոն կոչը ռևոլյուցիայի կողմը քաշեց կայազորի համարյա բոլոր զորամասերին»։ Գունդը մյուս զորամասերի հետ միասին ակտիվ կերպով մասնակցեց ապըստամբությանը և հանդիսացավ Ռևկոմի հենարաններից մեկը Ալեքսանդրոպոլում [1]։

Հայաստանի աշխատավորների հետ միասին դաշնակների տիրապետության տապալման համար ապստամբեցին բանակի զորամասերը։

Ալեքսանդրոպոլի, Կարսի և Սարիղամիշի ապստամբների հաղթանակը ոգեշնչում է ամբողջ հայ ժողովրդի զանգվածներին, որոնք նույնպես ապստամբության դրոշ են պարզում Նոր Բայազետի, Դիլիջանի, Զանգեզուրի գավառներում։

Նոր Բայազետի գավառում ապստամբության կազմակերպումը և գլխավորումը Արմենկոմը հանձնարարում է բոլշևիկ Հ. Սարուխանյանին։ Մայիսի 9-ին, Արմենկոմի հատուկ հանձնարարություններով Հ. Սարուխանյանը Երևանից մեկնում է Նոր Բայազետ։ Ապստամբությունը Սարուխանյանն սկսում է Ղարանլուղից (Մարտունի), որտեղ կանչվել էր գեներալ Սիլիկովի կողմից։ Սիլիկովի նպատակն էր կամ ստիպել Սարուխանյանին՝ հրաժարվել իր գաղափարներից, կամ ձերբակալել նրան, կանխել ապստամբությունը, սակայն ցարական և դաշնակցական այդ սատրապի բոլոր փորձերն անհաջողության են մատնվում։ Մայիսի 13-ին Սարուխանյանը իրականացնում է ապստամբությունը Ղարանլուղում։ Տապալվում է դաշնակների իշխանությունը։ Նույն օրը կազմվում է ռևկոմ, որի կազմի մեջ են մտնում Հ. Սարուխանյանը (նախագահ), Ս. Մակարյանը, Մ. Պետրոսյանը, Լ. Ներսիսյանը, Հ. Խաչատրյանը և ուրիշ զինվորներ։ Ռևկոմի որոշմամբ կազմակերպվում են գյուղական Սովետներ՝ շրջանի կենտրոնում և յոթ գյուղերում։ Գյուղում Սովետական իշխանության օրգանների կազմակերպման ուղղությամբ աչքի ընկնող գործ են կատարում պարտիայի անդամներ Ս. Բուղումյանը, Խ. Փոշոտյանը, Հ. Շուքուրյանը և ուրիշներ։ Իշխանությունը իր ձեռքը վերցնելով և թիկունքն ամրացնելով, ռևկոմը որոշում է հարձակվել գավառի կենտրոնի՝ Նոր Բայազետի վրա։

Նոր Բայազետի կոմունիստական կազմակերպության կատարած քաղաքական-մասսայական աշխատանքի շնորհիվ՝ աշխատավորները ամբողջովին կանգնում են Սովետական իշխանության պաշտպանության դիրքերում։ Դաշնակները կորցրել էին իրենց ոտքի տակի հողը։ Որպեսզի կանխեն ապստամբությունը քաղաքում, նրանք մայիսի 14-ին ձերբակալում են 13 կոմունիստների և արտաքսում Սևան կղզին, սակայն այդ էլ նրանց չի օգնում։

Նոր Բայազետ ուղարկված դաշնակցական պառլամենտի անդամները խոստովանում էին, որ «ոչ միայն Ղարանլուղ արշավելու (ապստամբների

[1] «Խորհրդային Հայաստան», № 105, 1927։

դեմ — Հ. Կ.), այլ անգամ քաղաքը տեղական ուժերով պաշտպանելու հնարավորություն չկար... Միլիցիան անվստահելի էր»[1]։

Ժողովրդի լայն խավերի մեջ ոչ մի աջակցություն չգտնելով, որոշ դիմադրությունից հետո գավառային կոմիսարը իր երկու-երեք տասնյակ համախոհներով ապստամբների ճնշման տակ՝ փախուստի է դիմում, ապստամբները գրավում են քաղաքը։

Մայիսի 14-ին ապստամբում է Շամշադինի շրջանը, իսկ 19-ին Իջևանի շրջանը։ Շամշադինի ապստամբ գյուղացիները, կոմունիստների ղեկավարությամբ, գավառային կոմիտեի ներկայացուցիչ Ա. Բերբերյանի գլխավորությամբ, մայիսի 15-ին իշխանությունը իրենց ձեռքն են վերցնում։ Իջևանի շրջանի ապստամբները՝ Շ. Ամիրխանյանի, Ե. Մկրտումյանի և կոմունիստ սպա Ս. Հակոբջանյանի ղեկավարությամբ մայիսի 20-ին Սև-քար գյուղից սկսում են հարձակումը և գրավում շրջանի կենտրոնը՝ Քարվանսարան (Իջևանը), իսկ 21-ին՝ Դիլիջանը։ Դիլիջանում կազմակերպվում է գավառային ռևկոմ Շ. Ամիրխանյանի և Ե. Մկրտումյանի գլխավորությամբ։

Դաշնակցական կառավարությունը օգնություն է խնդրում ամերիկա-անգլիական իմպերիալիստներից։ Մայիսի 22-ին, նա Վրաստանի իր դիվանագիտական ներկայացուցչին ուղարկած հեռագրում հայտնում է. «Բոլշևիկները գրավեցին Դիլիջանը։ Կատեգորիկ կերպով դաշնակիցներից օգնություն խնդրեցեք...»[2]։

Սիսիանի շրջանի աշխատավորները ապստամբում են մայիսի 20-ին և շրջանում հաստատում են Սովետական իշխանություն, իսկ Գորիսի շրջանի աշխատավորները՝ մայիսի 28-ին։

Ապստամբության փորձ են կատարում նաև Ղարաքիլիսայի, Դարալագյազի, Սուրմալուի, Կաղզվանի աշխատավորները և զինվորները։ Ապստամբական գրություն էր տիրում կանոնավոր բանակի 2-րդ գնդում և «Ազատամարտ» գրահագնացքի անձնակազմի շրջանում։

Այսպիսով, Հայաստանի բանվորները, գյուղացիները և զինվորները, անսահման ատելությամբ լցված դաշնակների տիրապետության նկատմամբ, մասսայական ապստամբությամբ ցանկանում են տապալել դաշնակների անարգ կառավարությունը և երկրում հաստատել սովետական կարգեր։

Ինչպես տեսանք, մայիսյան գինված ապստամբությունը մի պատահական ապստամբություն չէր, այլ աշխատավորների հերոսական մասսայական ապստամբությունն էր հանուն իրենց ազատության։ Ապստամբության հաղթանակի համար բոլոր անհրաժեշտ սոցիալ-դասակարգային և քաղաքական գործոնները առկա էին։ Բայց Արմենկոմը և Ռազմռևկոմը նախօրոք չպլանավորեցին ապստամբությունը, այն միասնական դարձնելու համար։ Ապստամբությունները տեղի ունեցան տարբեր ժամկետներում, մեկը մյուսից անջատ։ Հաղթանակից հետո ապստամբները մի շարք վայրերում սկզբից ևեթ հարձակման չանցան, այլ կառչեցին պաշտպանողական տակտիկայից, որը մահ էր ապստամբության համար։

Զինված ապստամբությունը որպես քաղաքական պայքարի մի առանձին տեսակի Կ. Մարքսը անվանել է արվեստ։ Վ. Ի. Լենինը՝ շարադրելով այդ

---

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 65/199, գ. 147, թ. 7։

[2] Հ. Էլչիբեկյան, Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Հայկական ՍՍՌ Գիտ. ակադ. «Տեղեկագիր», № 2, 1950։

«արվեստի» գլխավոր կանոնները, ցույց է տվել, որ ապստամբության հետ խաղ չպետք է անել, այն սկսելու դեպքում պետք է մինչև վերջը գնալ։ Վճռողական տեղում—վճռողական մոմենտին թշնամու նկատմամբ անհրաժեշտ է ստեղծել ուժերի մեծ գերակշռություն և առանց դանդաղելու անպայման հարձակման անցնել. պաշտպանությունը դինված ապստամբության մահն է։ Հակառակորդին պետք է հանկարծակիի բերել, անհրաժեշտ մոմենտին հարվածել նրան, քանի դեռ նրա ուժերը ցրված են, չթողնել, որ նա հավաքի իր ուժերը։ Անհրաժեշտ է ամեն օր, ինչ գնով էլ ուզում է լինի, հաջողությունների հասնել, պահպանել ապստամբների բարոյական գերակշռությունը, ընդ որում անպայման ցուցաբերել համարձակություն, դարձյալ համարձակություն գործողությունների մեջ [1]։ Ապստամբության հաղթանակի ապահովման համար անհրաժեշտ մարքս-լենինյան այս կարևորագույն դրույթները մայիսյան ապստամբության ժամանակ մոռացության տրվեցին։

Ունենալով հանդերձ քանակապես գերակշիռ, ապստամբության հաղթանակից ոգեշնչված զինված ուժ, ռևկոմը հապաղեց, հարձակման չանցավ։ Թշնամին ժամանակ շահեց, հարձակման նախաձեռնությունը իր ձեռքը վերցրեց։

Ապստամբության թիկունքը չմաքրվեց թշնամական տարրերից, որոնք քողարկվելով դարան մտան և սկսեցին քայքայիչ աշխատանք կատարել։

Օգտագործելով իր համար նպաստավոր իրադրությունը, թշնամին մայիսի 13-ին մոտեցավ Ալեքսանդրոպոլին. 14-ի լույս գիշերը դաշնակա-մաուզերիստական տարրերը, առանձին խմբերով սկսեցին թափանցել քաղաքը և լուսաբացին դրսից եկած ուժերի ընդհուպ մոտենալը որոշեց քաղաքի անկման անխուսափելիությունը, ապստամբության պարտությունը։ Մի օր Ալեքսանդրոպոլի անկումից առաջ՝ մայիսի 13-ի գիշերը Կարսի Ռևկոմը և ակտիվը նահանջեց քաղաքից։

Ալեքսանդրոպոլի անկումից հետո կոնտրռևոլյուցիան իր ուժերը կենտրոնացրեց Սարիղամիշի դեմ, որտեղ ապստամբությունը ճնշվեց մայիսի 17-ին։

Ճնշելով ապստամբությունը Ալեքսանդրոպոլում և մի քանի այլ վայրերում, դաշնակները ուժեր են ուղարկում Նոր Բայազետի ապստամբների դեմ։ Ապստամբների հերոսական դիմադրությունը քաղաքից 8—10 կիլոմետր հեռավորության վրա՝ չի փոխում դրությունը։ Մայիսի 19-ին ընկնում է նաև Նոր Բայազետը։

Ապստամբական գործողությունները ավելի կազմակերպված բնույթ են կրում Դիլիջանի գավառում, մասնավորապես Շամշադինի շրջանում։ Այստեղ դաշնակներին չի հաջողվում հեշտությամբ ընկճել գյուղացիների դիմադրությունը։ Շամշադինի ապստամբությունը ղեկավարելու գործում մեծ դեր կատարեց գավառային կոմիտեի ներկայացուցիչ Ա. Բերբերյանը, որը ամբողջովին իրեն նվիրում է ապստամբության հաղթանակը ապահովելու գործին և մի շարք ընկերների հետ միասին գլխավորում է ռազմական գործողությունները։

Մայիսի 18-ից սկսած շրջանը բաժանված էր երկու մասի, երկու լագերի։ Ամրանալով Ղրղի և Վերին Կարմիրաղբյուր գյուղերի բարձունքներում, ապստամբները հերոսաբար կռվում էին դաշնակների կանոնավոր զորային միավորների դեմ, ծանր հարվածներ հասցնելով նրանց։ Շամշադինի շրջանում

[1] Տես Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 211։

սկսվում են քաղաքացիական կռիվներ, որոնք ավելի կատաղի բնույթ են ստանում հունիսի 11-ից սկսած, երբ թշնամին լրացուցիչ ուժեր ստանալով՝ անցնում է հարձակման, բայց միշտ հանդիպում է ապստամբների հակահարվածին։

Հունիսի 18-ին դաշնակցական զորքի հրամանատարությունը հայտնում է կառավարությանը, որ «Այսօր առավոտյան ժամը 11 և կեսին Շամշադինի բոլշևիկյան տասը գյուղերը կազմակերպված հարձակվեցին Տուզ Կալա գյուղի վրա. ամբողջ հինգ ժամ հրացանաձգությունը շարունակվում է մեզ վրա՝ Վերին Կարմիրաղբյուր և Թուզ գյուղերի դիրքերից»[1]։

Դաշնակները ավելի ուժեղ հարվածներ են ստանում հունիսի 19—21-ին տեղի ունեցած մարտերում և 22-ին թշնամու կանոնավոր զորամասը փախուստի է դիմում։

Դիլիջանի գավառից Ադրբեջան նահանջած ապստամբ ուժերը նոր հարձակման են անցնում հունիսի 22-ին, ջախջախում են հակառակորդին և 23-ին նորից գրավում Իջևանը, նպատակ ունենալով կրկին վերականգնել Սովետական իշխանությունը ամբողջ գավառում։ Սակայն ապստամբների Իջևանի խմբի հրամանատարության թույլ տված կոպիտ սխալների և անկազմակերպվածության պատճառով, նրանք նորից նահանջում են Սովետական Ադրբեջան։

Շամշադինի ապստամբ գյուղացիները շարունակում են պայքարը մինչև հունիսի 27-ը, նահանջում են Ադրբեջան միայն հատուկ կարգադրություն ստանալուց հետո։

Մայիսյան փառապանծ ապստամբությունը թանկ զոհեր պահանջեց։ Հայ ժողովրդի ազատության համար, սովետական կարգերի համար մղվող պայքարում իրենց կյանքը տվին մեր ժողովրդի շատ խիզախ զավակներ, Կոմունիստական պարտիայի անձնուրաց զինվորներ, Հայաստանի պարտիական կազմակերպությունների մի քանի տասնյակ ղեկավարներ ու դործիչներ։ Մեր ժողովուրդը միշտ վառ կպահի իր հիշողությունում Ստ. Ալլահվերդյանի, Հ. Սարուխանյանի, Ռ. Ղարիբջանյանի, Ղ. Ղուկասյանի, Բ. Բատիկյանի, Ե. Սևյանի, Ս. Մուսայելյանի, Ի. Մկրտումյանի, Բ. Հարությունյանի, Ա. Ճուղուրյանի, Ա. Փանյանի և շատ ուրիշների հիշատակը։

Մայիսյան ապստամբությունից հետո Հայաստանի բանվորների և աշխատավոր գյուղացիների պայքարը դաշնակների արյունոտ տիրապետության դեմ՝ չդադարեց, այն հաղթանակով պսակվեց 1920 թ. նոյեմբերին։ Ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, Հայաստանի աշխատավորները վերջնականապես ազատագրեցին երկիրը և Հայաստանում հաստատեցին Սովետական իշխանություն, որը բերեց մեր ժողովրդին ազատ բարգավաճման և ազգային վերածննդի լայն հնարավորություն։ Սովետական իշխանության շնորհիվ, որի համար 35 տարի առաջ աշխատավորները կատարեցին մայիսյան հերոսական ապստամբությունը, հայ ժողովուրդը այդ ժամանակամիջոցում ձեռք է բերել պատմական մեծագույն նվաճումներ տնտեսության, կուլտուրայի, արվեստի, դիտության և մյուս բնագավառներում։ Սովետական Մեծ Միության եղբայրական ընտանիքում նա ակտիվորեն մասնակցում է կոմունիստական շինարարության վեհ դործին և անսահման վստահությամբ լի՝ իր փառավոր ապագայի նկատմամբ, քայլում է դեպի առաջ, դեպի կոմունիզմի վերջնական հաղթանակը։

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 67/199, գ. 1733, թ. 107։